«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ-դասվար

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ Նարինե Ասատրյան

ՄԱՐԶ՝ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Զորակապի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. Արդյունավետ կրթադաստիարակչական գործի կազմակերպման նախապայմանները

1.1. Ուսուցչի հոգեբանամանկավարժական պատրաստությունը և դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը.....5

1.2. Դասղեկի դերը դպրոցում՝ սովորողների կրթության կազմակերպման և արժեկողմնորոշիչ դաստիարակության հարցերում.....10

Գլուխ 2. Հետազոտական մաս

2.1. Ծնողների շրջանում հարցման անցկացում և արդյունքների վերլուծություն.....12

Եզրակացություն…….…….,…….....15

Օգտագործած գրականության ցանկ…….....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պայմաններում մեծացել է դպրոցի դերը ինչպես սովորողների կյանքում, այնպես էլ ողջ հասարակության համար: Դպրոցը բազմաթիվ թելերով կապված է այն սոցիալական միջավայրի հետ, որում գործում է: Կրթական գործի կազմակերպումը պետք է բավարարի անհատի և պետության կարիքները, քանի որ որակյալ կրթությունը ոչ միայն սոցիոմշակութային վերափոխման երկարաժամկետ ներուժ է տվյալ հասարակության և պետության համար, այլև՝ սոցիալական մրցակցության և կայունության գրավական: Այս տեսանկյունից կարևոր է դառնում սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման և արժեկողմնորոշիչ դաստիարակության հարցերը, որում առանցքային դեր ունեն ուսուցիչները, մասնավորապես՝ դասվարները: Ուսուցիչները պետք է տիրապետեն հաղորդակցման, կառավարման, համագործակցային և մի շարք այլ մանկավարժահոգեբանական հմտությունների և, որ ամենակարևորն է՝ նրանք պետք է կարողանան ապահովել դպրոց-ընտանիք կապը, չէ որ առանց այս ամենի սովորողների կրթադաստիարակչական գործի կազմակերպումը պարզապես թերի կլինի:

Հետազոտության արդիականությունը. Ներկայիս սոցիալ-տնտեսական և մշակութային իրավիճակը կապված է ավանդական արժեքային հիմքերի վերաիմաստավորման, հասարակության նոր հոգևոր և բարոյական հիմքերի բազմազանության և անկայունության հետ, ինչը սրում է գիտակցված արժեբանական ընտրության խնդիրը: Ուսուցչի արժեքային կողմնորոշումները հանդես են գալիս որպես նրա մասնագիտական գաղափարախոսություն, որն ազդում է մանկավարժական գործընթացի տարբեր ասպեկտների վրա. Նա հանդես է գալիս որպես որոշակի արժեհամակարգի թարգմանիչ՝ ազդելով դպրոցականների արժեքային գիտակցության վրա, զարգացնելով և ուղղելով նրանց հոգևոր և բարոյական պատկերացումները: Միևնույն ժամանակ կրթական գործընթացում զգալիորեն ի հայտ եկող մասնագիտական «անոմիան»՝ իմաստի կորստի վիճակ (Է. Դյուրկհեյմ), ուսուցչի առջև սովորողների մեջ օբյեկտիվ արժեքներ ձևավորելու խնդիր է դնում, որը հնարավոր չէ իրագործել առանց սովորողների ծնողների կամ նրանց

օրինական ներկայացուցիչների հետ ամենօրյա համագործակցության: Դպրոց-ընտանիք երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Ուստի արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն երեխայի վարքի, առաջադիմության և այլ կարևորագույն հարցերի վերաբերյալ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել «Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում» թեման:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. *Ներկայացնել* ուսուցչի դերը՝ դպրոց-ընտանիք արդյունավետ համագործակցության ապահովման և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեջ:
2. *Անցկացնել* հետազոտություն՝ ծնող-դասղեկ համագործակցության գնահատման և հետադարձ կապի ապահովման նպատակով:
3. *Վերլուծել* հետազոտության արդյունքները և համարժեք եզրահանգումներ կատարել:

Գլուխ 1. Արդյունավետ կրթադաստիարակչական գործի կազմակերպման նախապայմանները

1.1. Ուսուցչի հոգեբանամանկավարժական պատրաստությունը և դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը

ՀՀ կրթական համակարգի աստիճանական զարգացմանը զուգընթաց՝ կարևորվում է ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների արդյունավետությունը: Ուսուցման և դաստիարակության արդյունքները կախված են ոչ միայն մանկավարժական տեխնոլոգիայից, այլև ուսուցիչների որակավորումից, նրանց մանկավարժական մտածողության մակարդակից, դրդապատճառներից, հոգեբանամանկավարժական պատրաստության աստիճանից, կարգապահական որակներից և այլն [2-6]:

Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը: Բնական է, որ հանրակրթություն իրականացվում է երեխաներին գիտելիք, կարողություն և հմտություն տալու համար: Դրա հետ միասին զարգացվում է նրանց արժեքային համակարգը:

Ուսուցման գործընթացը *դիտվում է որպես ուսուցիչների և աշակերտների համատեղ գործունեություն, որի նպատակը* ***անհատականության ձևավորմանն*** *ուղղված մանկավարժական խնդիրների լուծումն է:*

Դպրոցը չի կարող լինել պարզապես երեխաների դասապրոցեսի կազմակերպման համակարգ: Կրթությունը պետք է երեխային իր կարողությունները բացահայտելու հնարավորություն տա և օգնի ձևավորվելու որպես անհատ, քանի որ մենք այսօր ապրում ենք մի աշխարհում, որին անհրաժեշտ են հումանիստական կրթական միջավայրում ձևավորված քաղաքացիներ [6]:

Կրթության որակը չի կարող լինել ավելին, քան ուսուցիչների որակն է: Վերջին տարիներին համոզիչ հետազոտական ապացույցներ կան այն մասին, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու առանցքային փոփոխականը ուսուցիչներն են: Ուսուցման գործընթացի կազմակերպումը անհրաժեշտ է իրականացնել ելնելով աշակերտների կրթական կարիքներից: Հարկ է, որ դպրոցը նախ ուշադրություն դարձնի պետության սոցիալական առաջնահերթություններին: Այս առումով կրթակարգերի մեջ առաջնային տեղ է տրվում սոցիալական հմտությունների յուրացման պրակտիկային:

Ստեղծելով համագործակցության արդյունավետ մեխանիզմներ՝ դպրոց-ընտանիք համատեղ կապի ամրապնդմամբ հնարավոր կլինի ապահովել մատչելի, հասանելի և արդյունավետ կրթադաստիարակչական գործընթաց յուրաքանչյուր դպրոցում՝ յուրաքանչյուր երեխայի համար: [5] Պետք է նկատի ունենալ, որ կրտսեր դպրոցականներն այսօր դրված են զարգացման բոլորովին այլ պայմանների մեջ, քան նրանց հասակակիցները 20-30 տարի առաջ: Հիմնական պատճառներն են՝ ինֆորմատիզացիան, վիրտուալ տիրույթում ազատ հաղորդակցումը, հասարակության անդամների արժեքային համակարգի փոփոխությունները, սոցիալականացման և դաստիարակության ձևերի բազմազանությունը, սոցիալականացման տարաբնույթ գործոնների ու սուբյեկտների մեծ թիվը և այլն:

Ժամանակակից դպրոցականը համացանցի տեղեկատվական տիրույթում անցկացնում է բավականին երկար ժամանակ: Դա, անկասկած, նպաստում է նրա տեղեկատվական կոմպետենցիաների զարգացմանը, սակայն այդ գործունեությունն ունի նաև բացասական կողմեր: Ժամանակակից սովորողը, որպես կանոն, ունի բնավորության հետևյալ գծերը՝ անկախություն, պարտականություններից ազատություն, քննադատական վերաբերմունք մեծերի հանդեպ, մտածողության այսրոպեականություն, հարուստ, սակայն չհամակարգված տեղեկացվածություն: Կարելի է արձանագրել, որ այդ ամենը որոշակի կերպով բարդացնում է ուսուցչի գործը [1]:

Դպրոցական կրթության մեջ ուսուցչի կարևորագույն գործառույթներից մեկը՝ դպրոց-ընտանիք-հասարակություն կապի ամրապնդումն է՝ համատեղ ջանքերի

միավորումը: Դպրոցի սոցիալական գործառույթների թվում կարևորվում է ժամանակակից ընտանիքի զարգացման միտումներին համապատասխան արժեքային կողմնորոշումների ձևավորման, երեխաների կրթության և ընտանեկան դաստիարակության մանկավարժական կառավարումը [4-6]:

Դասասենյակի կառավարումը ուսուցչի ամենադժվար պարտականություններից է իր մասնագիտական գործունեության մեջ: Այն ներառում է այնպիսի անբաժանելի ուղղություն, ինչպիսին է ծնողների հետ աշխատանքը: Իսկապես, երեխայի ուսուցման և դաստիարակության արդյունքները մեծապես կախված են նրա ծնողների և դասավանդող ուսուցիչների, հատկապես դասվարների հետ հաջող փոխհարաբերություններից: Նման հարաբերություններում հաջողության հասնելու համար մանկավարժը պետք է նախնական կապ հաստատի երեխայի ծնողների հետ: Սակայն ինչ-ինչ պատճառներով ոչ բոլոր ծնողները չէ, որ շտապում համագործակցել: Որոշ ծնողներ չափազանց պասիվ են և պատշաճ մասնակցություն չեն ցուցաբերում իրենց երեխայի կրթադաստիարակչական հարցերում: Որոշները «կոնֆլիկտային» են, նրանք հաճախ են դրսևորում անհամաձայնություն և ագրեսիվ վարքագիծ՝ չմասնակցելով իրենց երեխայի կամ դասարանի մյուս երեխաների հետ կապված խնդիրների լուծմանը: Կան նաև բոլորովին այլ՝ ակտիվ ու հետաքրքրաշարժ ծնողներ, ովքեր անմիջապես միջամտում են իրենց երեխայի հետ դասղեկի աշխատանքին: Ինչպես նաև երբեմն գործ ենք ունենում «անհանգիստ» ծնողների հետ, ովքեր չափից դուրս անհանգիստ են արձագանքում ուսուցչի ցանկացած հայտարարության և մեկնաբանության: *Դասղեկը պարտավոր է անհատական մոտեցում դրսևորել և փոխազդեցության տարբեր ուղիներ գտնել ցանկացած ծնողի հետ դրական կապ հաստատելու համար: Դա անելու համար նա պետք է ունենա այնպիսի մասնագիտական որակներ, ինչպիսիք են հոգեբանական ճկունությունը, ինտուիցիան, հոգեբանական տոկունությունը, մանկավարժական տակտը վարպետությունը, ինչպես նաև տիրապետի հաղորդակցման դեմոկրատական ոճին:*

Ծնողների հետ հոգեբանական և մանկավարժական աշխատանքի իրականացման ավանդական ձևերը ներառում են ծնողական ժողովներ, հանդիպումներ, դասախոսություններ, բանավեճեր, հարց ու պատասխանի բաց օրեր,

անհատական զրույց, իսկ ոչ ավանդականները ներառում են ինտերակտիվ, կանոնակարգված քննարկումներ: Ուսուցչի և ծնողների միջև համագործակցության ամենատարածված ձևերից մեկը ծնողների հետ հանդիպումն է: Ծնողական ժողովների ընթացքում, որոնք կարող են լինել *դասարանային և դպրոցական՝* քննարկվում են կրթական գործընթացի խնդիրները, որոշվում են դպրոցի և ծնողների միջև համագործակցության ձևերը և սովորաբար ամփոփվում են աշխատանքի որոշակի ժամանակահատվածի արդյունքներն ու ձեռքբերումները: Դասարանական ժողովներին ուսուցիչը չպետք է բոլորի ներկայությամբ մատնանշի կոնկրետ աշակերտի սխալները կամ անհաջողությունները: Ավելի արդյունավետ է խոսել ոչ միայն կրթական, այլ նաև արտադասարանական գործունեության մեջ աշակերտի գործադրած ջանքերի մասին: Մյուս կարևոր կետն այն է, որ ծնողական ժողովը չպետք է լինի դասղեկի մենախոսություն: Առաջին հերթին այն պետք է հնարավորություն տա կարծիքների, գաղափարների, առաջարկների փոխանակման համար: Ծնողական ժողովները կարելի է անցկացնել նաև կլոր սեղանի կամ թեմատիկ քննարկման ձևով: Ծնողների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքի մեկ այլ միջոց է *գիտաժողովների անցկացումը*, որի ընթացքում տեղի է ունենում երեխաների դաստիարակության հետ կապված փորձի փոխանակում: Կոնֆերանսը լուրջ միջոցառում է, որի կազմակերպման համար մանրակրկիտ նախապատրաստություն է պահանջվում ոչ միայն դասղեկից, այլև սովորողների ծնողների կողմից, ովքեր կարող են զեկուցել երեխաներին դաստիարակելու իրենց մանկավարժական փորձի մասին: Դասղեկը ծնողներին պետք է ներգրավի նաև կրթական գործունեության մեջ: Դա կարելի է անել տարբեր ձևերով՝ *բաց դասերի, արտադասարանական գործունության, ծնողների կամավորության միջոցով* և այլն: Կամավորությունը ներառում է ծնողների կողմից իրականացվող այնպիսի աշխատանքներ ինչպիսիք են տարբեր միջոցառումների կազմակերպման ընթացքում ակտիվ մասնակցություն ցուցաբերելը, նոր գաղափարների իրականացմանը նպաստելը և այլն: Ծնողները կարող են և պետք է անմիջականորեն ներգրավված լինեն դպրոցական արձակուրդների կազմակերպման և անցկացման մեջ՝ հանդես գալով, օրինակ, որպես ժյուրիի անդամներ կամ իրենց երեխաների հետ տարբեր միջոցառումների կամ սպորտային մրցույթների մասնակցելով: Դպրոցական

երեկոների և արձակուրդների կազմակերպման հարցում ուսուցչին օգնելը ծնողներին թույլ է տալիս սովորել ինչ-որ նոր և օգտակար բան նախ իրենց համար, ապա սեփական փորձով այլ ծնողների հետ կիսվելու հնարավորություն է տալիս: Այն նաև օգնում է բարելավել ծնողների հարաբերությունները ուսուցչական կազմի և դպրոցի հետ: Դասղեկի համագործակցությունը ծնողների հետ կարող է դրսևորվել նաև *ծնողների կողմից կազմակերպվող դասաժամի ձևով*: Օրինակ՝ ուսուցչի օգնությամբ նրանք կարող են իրենց երեխաների համար կարիերայի ուղղորդման դաս պատրաստել՝ խոսելով իրենց մասնագիտության առանձնահատկությունների կամ հոբբիների մասին: Բացի վերը նշվածներից դասվարը աշակերտների ծնողներին պետք է ներգրավի հենց *ուսումնական գործընթացի կառավարման գործում*, ինչը իրականացվում է ծնողական հանձնաժողովի աշխատանքով: Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար: Միանգամայն պարզ է, որ առանց ծնողների մասնակցության ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ հնարավոր չէ հասնել բարձր արդյունքների: Ուստի ծնողների հետ աշխատանքը կարևոր տեղ է գրավում դպրոցի կրթական համակարգում: Ընտանիքի հետ աշխատանքի կազմակերպումը դպրոցում հիմնված է շահագրգիռ երկխոսության և համագործակցության հաստատման վրա, որը վերաճում է ծնողների ակտիվ աջակցության՝ ուղղված կրթական համակարգի հիմնական ֆունկցիայի՝ զարգացման, անձի ամբողջականության ապահովմանը:

Ընտանիքի հետ կրթական աշխատանքի կազմակերպման հիմքը դպրոցի կանոնադրությունն է, որպես հիմնական իրավական փաստաթուղթ, որը կարգավորում է ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ուսուցիչների, երեխաների և ծնողների փոխգործակցությունը, ինչպես նաև տեղական ակտերը [9]:

Լավագույն որակի կրթությունը բոլոր համատեքստերում կարելի է ձեռք բերել բոլոր շահագրգիռ կողմերի հետ շարունակական երկխոսության և համագործակցության միջոցով: Ուսուցիչների, աշակերտների և ծնողների ձայներն ու կարիքները պետք է մշտապես հաշվի առնվեն կրթական քաղաքականության մշակման ժամանակ [10]: Այսպիսով, երեխայի ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է դպրոցի, դասվարի և ծնողների ակտիվ համագործակցությունից: Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ դպրոցները պետք է աշխատակցեն նրանց հետ, որպեսզի դպրոցն ու ընտանիքը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին: Ծնողներ արդյունավետ ընդգրկվածության ապահովման համար դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը: Լավագույն ուսուցիչները աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին.

- Ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում են:
- Համարում են գործընկեր երեխաների ուսման ու զարգացման գործում:
- Դպրոցի գործունեության մեջ ընդգրկվելու հնարավորություններ են տալիս:
- Փոխանակում են երեխայի անձի զարգացմանը միտված օգտակար տեղեկատվությամբ:
- Ուսուցչական անձնակազմի հետ մշտական շփման հնարավորություն, ինչը նպաստում է նրանց լիարժեք ընդգրկվածությանը: [7]

1.2. Դասղեկի դերը դպրոցում՝ սովորողների կրթության կազմակերպման և արժեկողմնորոշիչ դաստիարակության հարցերում

Դպրոցահասակ երեխան առավել ընկալունակ է զգայական-արժեքային, հոգևոր-բարոյական դաստիարակության նկատմամբ: Ընդ որում՝ կրտսեր դպրոցի դաստիարակության թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ դաստիարակության բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման՝ օնտոգենեզի բացասական հետևանքների: Դրա համար

ժամանակակից տարրական դպրոցում սկսել են առանձնակի ուշադրություն դարձնել հատկապես դաստիարակության խնդիրներին [5-29]: Դաստիարակչական միջոցառումները լրացնում, ընդլայնում, միահյուսում, որակապես նոր մակարդակի են բարձրացնում անձի գիտելիքները, ունակությունները, հմտությունները, դիրքորոշումը և այլ հատկանիշներ, որոնք ձևավորվել են գործունեության հիմնական տեսակների միջոցով: Քանի որ սովորողները զարգանում և ձևավորվում են գործունեության ընթացքում, ապա մեր գլխավոր խնդիրն է լավագույն ձևով կազմակերպել գործունեության այն տեսակները, որոնք տվյալ տարիքում արդյունավետ են զարգացնում և ձևավորում սովորողի անձը [3-136]:

Երեխայի դաստիարակությունն իրականացվում է հիմնականում երեք միջավայրերում՝ ընտանիք, դպրոց, շրջապատ: Սրանցից իր կարևորությամբ և առաջնայնությամբ առանձնանում է դպրոցը, որտեղ երեխան անցկացնում է իր ժամանակի մեծ մասը: Սովորողների հետ ամենաշատ և անմիջական շփվողն ու դաստիարակչական գործընթացի մասնակիցը դասղեկն է, իսկ տարրական դպրոցում՝ դասվարը:

Բոլոր քաղաքակիրթ ազգերի մտահոգության առարկան ազգային դաստիարակությունն է: Դասղեկի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքը պետք է ուղղված լինի հայրենիքի, ազգային ավանդույթների, հայրենի բնության նկատմամբ սիրո և հպարտության զգացմունքի ձևավորմանը:

Դասարանի ղեկավարը պետք է ունենա պետական և ազգային մտածողություն, կայուն համոզմունքներ, կազմակերպչական ունակություններ, լավ տեղեկացված լինի երկրի սոցիալ-քաղաքական կյանքի և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին, ունենա բարձր բարոյական որակներ, լինի ազնիվ, արդարամիտ, նրբանկատ, համբերատար, տիրապետի մանկավարժական արվեստի բոլոր միջոցներին, մանկավարժական վարպետությանն ու տակտին, ունենա մանկավարժական ինտուիցիա: Այսպիսով, դասարանի ղեկավարի դերը շատ մեծ է, որովհետև հանդես է գալիս որպես դաստիարակության գործընթացի կարգավորող, դպրոց, ընտանիք, միջավայր համագործակցության կազմակերպիչ:

Գլուխ 2. Հետազոտական մաս

2.1. Ծնողների շրջանում հարցման անցկացում և արդյունքների վերլուծություն

Առաջադրված հիմնախնդիր՝ ուսուցչի դերը՝ դպրոց-ընտանիք արդյունավետ համագործակցության ապահովման և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեջ:

Հիմնախնդրի նպատակը

- *Գնահատել դասղեկ-ծնող համագործակցության արդյունավետությունը, ապահովել ծնող-դասղեկ հետադարձ կապը:*

Հարցաթերթի կառուցվածքը: Հարցաթերթը բաղկացած է հինգ հարցերից, որոնց մեջ ներառված են և՛ բաց հարցեր և՛ փակ հարցեր: Բաց հարցերն ենթադրում են ազատ պատասխաններ, իսկ փակ հարցերին հարկավոր է պատասխանել՝ ընտրելով նշված տարբերակներից մեկը: Հարցումն անցկացվել է անանուն, հնարավորինս անկեղծ պատասխանների ակնկալիքով:

Մասնակիցներ՝ Զորակապի միջնակարգ դպրոցի երրորդ դասարանի աշակերտների ծնողներ:

Հարցվողների թիվը՝ քսաներկու:

Այժմ ներկայացնենք ծնողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման հարցաթերթի հարցերը և դրանց վերլուծությունը:

Հարց 1. Որքանո՞վ եք հետաքրքրված դպրոցական առօրյայով և որքանո՞վ եք ներգրավված դպրոցի կյանքում:

Ա.ակտիվ և կամավոր կերպով աջակցում եմ դպրոցին

Բ. բացարձակ հետաքրքրված չեմ

Գ. չափից դուրս անհանգիստ եմ իմ երեխայի առօրյայով

2. Գո՞հ եք արդյոք դասղեկի հետ ձեր համագործակցությունից: Խնդրում ենք կոնկրետացնել ցանկացած պատասխան:

Ա. այո

Բ. ոչ

Գ. ավելի շատ այո

Դ. ավելի շուտ ոչ

3. Համարու՞մ եք, որ ձեր երեխայի կրթական հաջողությունները դպրոց-ընտանիք համատեղ ջանքերի արդյունքն է:

Ա. այո, միանշանակ

Բ. ոչ այնքան

4. Ինչպիսի՞ դժվարությունների եք հանդիպել հոգուտ դպրոցի կամավոր աշխատանքներ իրականացնելիս:

---

5. Ունե՞ք արդյոք որևէ անհանգստություն, բողոք կամ առաջարկություն՝ առաջիկայում մեր համատեղ համագործակցությունը բարելավելու ուղղությամբ:

Հետազոտության արդյունքների վերլուծությսն արդյունքում պարզ դարձավ, որ ծնողների մեծամասնությունը պատրաստակամ են ակտիվ և կամավոր կերպով աջակցել դպրոցին, քանի որ կարևորում են դպրոց-ընտանիք համագործակցության դերը իրենց երեխայի անձի զարգացման գործում: Հարցվողների 30%-ը հանդիսանում են անհանգիստ, տագնապային ծնողներ, սակայն հաջողված երկխոսության շնորհիվ հաստատվել են դրական հարաբերություններ: Հարցվողների 20%-ը, սակայն դժգոհություն են հայտնում ծնող-ծնող հարաբերություններում առկա ներքին կոնֆլիկտից՝ պարզաբանելով, որ շատ հաճախ ծնողի կողմից դասղեկին կամավոր աջակցություն ցուցաբերելը մյուս ծնողների մոտ քննադության առիթ է դառնում:

Հարկ ենք համարում դիտարկել, որ այս խնդիրը առաջիկայում բարձրաձայնելու և լուծելու կարիք ենք տեսնում: Բացի այդ, առաջիկայում մեր համատեղ համագործակցությունը բարելավելու ուղղությամբ նախատեսվում է ծնողների առաջարկով «փակ արկղ» ունենալ, որտեղ տեղ կգտնեն ծնողների բողոքներն ու առաջարկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում» թեմայով հետազոտական աշխատանքի կատարման արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

- Դպրոց-ընտանիք արդյունավետ համագործակցության ապահովման և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեջ հսկայական դերակատարում ունի ուսուցիչը՝ իր մարդկային և մասնագիտական որակներով հանդերձ: Դասղեկը պարտավոր է անհատական մոտեցում ցուցաբերել և փոխազդեցության բարեհարմար ուղիներ գտնել ցանկացած ծնողի հետ դրական կապ հաստատելու համար: Հարկ է մշտապես հաշվի առնել ծնողների կարծիքն ու երեխաների կրթական առաջնահերթությունները:
- Ծնողների ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռբերումներին: Հարցաթերթիկային հետազոտությունից պարզ դարձավ, որ ծնողների շրջանում կան որոշակի անհամաձայնություններ, որոնք առաջիկայում դիտարկելու կարիք կա:

Առաջարկում ենք հաճախակի անցկացնել դպրոց-ընտանիք հետադարձ կապի հարցարաններ և ծնողների փոխհարաբերությունները բարելավող միջոցառումներ, քանի որ դա նույնպես դրական ներգործություն կունենա արդյունավետ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բրուտյան Վ., «Կրտսեր դպրոցականների դաստիարակության ժամանակակից խնդիրները»: «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական Հոդվածներ: Երևան 2019: N1, էջեր 4-13:
2. Մանկավարժական միտք» 1-2: Գիտական հաղորդումներ: Հարությունյան Ն., Տիգրանյան Ա., «ՀՀ կրթական համակարգը, նպատակը, խնդիրները»: Երևան 2016: էջեր 5-6:
3. Ռաչենկո Ի. Պ., «Ուսուցչի աշխատանքի գիտական կազմակերպումը»: Երևան 1984: 320 էջ:
4. Биктуганов Ю. И., Взаимодействие педагога с семьей и общественностью учеб. пособие/ Урал. гос. пед. ун-т. – Екатеринбург. 2016. – 148 с.
5. Землянская Е. Н., Теория и методика воспитания школьников: учебник и практикум для СПО. М., издательство Юрайт. 2019. – 57 с.
6. Դաստիարակության խնդիրներն այսօր https://avedisianschool.am
7. G-PREID Ծնողների ներգրավվածությունը, Հանձնարարականներ ուսուցիչների և տնօրենների համար http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf
8. Активные формы сотрудничества классного руководителя с родителями учащихся https://scienceforum.ru/2017/article/2017032217
9. Сотрудничество с родителями http://gimnaziagaidar
10. Teachers, students and parents to work together with ministry to improve the quality of education https://www.unicef.org/